# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1700

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.03847ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի, Իջևան համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Լաուրա Սերգեյի Բլբուլյանը, որ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով ձեռք է բերել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս իր բնակելի տնով: Ըստ 18.01.1987թ.կազմված տեխնիկական անձնագրի հողամասի փաստացի չափը, կազմում է 0.039հա, չափագրումից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.03847հա, որի վրա առկա է 1930թ. կառուցված 274.2քմ մակերեսով բնակելի տուն, ուստի դիմել է փաստացի 0.03847հա մակերեսով հողամասի և մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված  բնակելի տան, իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով / ծածկագիր 11-001-0140-0037/:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0.03847հա մակերեսով հողամասը և 274.2քմ ներքին մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցված չեն և չեն գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" ՀՀ օրենքի 1-ին և  2-րդ հոդվածների ,  ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ  ԵՄ.

1. Վերականգնել քաղաքացի Լաուրա Սերգեյի Բլբուլյանի սեփականության իրավունքը՝ Տավուշի մարզ ք. Իջևան Սայաթ-Նովա փողոց թիվ 6 բնակելի տուն հասցեում գտնվող՝ 0.03847հա մակերեսով հողամասի և քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված ընդհանուր՝ 274.2քմ մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ / ծածկագիր 11-001-0140-0037/ և օրենքի ուժով համարել քաղաքացու սեփականությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1701

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՇԹԱՌԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.06971ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-035-0043-0027 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Արման Համլետի Մովսիսյանը, Տավուշի մարզի, Իջևան համայնքի Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող և ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող /ծածկագիր 11-035-0043-0027/ հողամասին հասցեավորում տրամադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող /ծածկագիր 11-035-0043-0027/ հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Խաշթառակ, 9-րդ փողոց, 3/2 հողամաս:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԾԱՂԱՐՅԱՆ**

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1702

### ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԽԱՇԹԱՌԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.22437ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ 11-035-0085-0009 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին են դիմել Համլետ Հրանտի Մովսիսյանը՝ ծնված 1952թ., Ալվարդ Աշոտի Խոջումյանը՝ ծնված 1953թ., Ռուզաննա Համլետի Մովսեսյանը՝ ծնված 1977թ., Արման Համլետի Մովսիսյանը՝ ծնված 1978թ., Տաթևիկ Համլետի Մովսեսյանը՝ ծնված 1981թ. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում ձեռք են բերել բնակելի տուն՝ իր հողամասով ուստի դիմել են հիմքերի վերականգնման խնդրանքով: Բնակելի տան զբաղեցրած հողամասի օրինական մակերեսը, ըստ քաղվածքի կազմում է 0.28հա /ծածկագիր 11-035-0085-0009/:Չափագրությունից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.22437հա, որի վրա առկա է 1996թ. կառուցված 208,8քմ մակերեսով բնակելի տուն, ուստի դիմել է մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված փաստացի 0.22437հա մակերեսով և 206.8քմ ներքին մակերեսով բնակելի տան քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:

Հաշվի առնելով, որ նշված հողամասն ու շինությունները չեն գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների , ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի, պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել քաղաքացիներ Համլետ Հրանտի Մովսիսյանի, Ալվարդ Աշոտի Խոջումյանի, Ռուզաննա Համլետի Մովսեսյանի, Արման Համլետի Մովսիսյանի, Տաթևիկ Համլետի Մովսեսյանի սեփականության իրավունքը՝ Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.22437հա մակերեսով հողամասի և 208.8քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ /ծածկագիր 11-035-0085-0009/ և օրենքի ուժով համարել քաղաքացիների սեփականությունը:

2. Տավուշի մարզի Իջևան համայնքի Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով քաղաքացիներ Համլետ Հրանտի Մովսիսյանին, Ալվարդ Աշոտի Խոջումյանին, Ռուզաննա Համլետի Մովսեսյանին, Արման Համլետի Մովսիսյանին, Տաթևիկ Համլետի Մովսեսյանին պատկանող հողամասին և բնակելի տանը տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Խաշթառակ 11-րդ փողոց 1 բնակելի տուն:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1703

### ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԱՅԳԵՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԾԱԾԿԱԳԻՐ՝ 11-009-0202-0007/ 0.2ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.2հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-00202-0007/ համապատասխանաբար առանձնացնել 0.046հա մակերեսով (առանձնացվող մաս 1), 0.046հա (առանձնացվող մաս 2) մակերեսով , 0.046հա (առանձնացվող մաս 3) և 0.06224հա (առանձնացվող մաս 4) անշարժ գույքեր և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ 45 փողոց 1/1 հասցեում գտնվող 0.2հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-0202-0007/ համապատասխանաբար առանձնացված 0.046հա մակերեսով (առանձնացվող մաս 1) մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Կայան 45-րդ փողոց, 12 հողամաս:

2. Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ 45 փողոց 1/1 հասցեում գտնվող 0.2հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-0202-0007/ համապատասխանաբար առանձնացված 0.046հա մակերեսով (առանձնացվող մաս 2) մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Կայան 45-րդ փողոց, 12/1 հողամաս:

3. Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ 45 փողոց 1/1 հասցեում գտնվող 0.2հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-0202-0007/ համապատասխանաբար առանձնացված 0.046հա մակերեսով (առանձնացվող մաս 3) մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Կայան 45-րդ փողոց, 12/2 հողամաս:

4..Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ 45 փողոց 1/1 հասցեում գտնվող 0.2հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-0202-0007/ համապատասխանաբար առանձնացված 0.06224հա մակերեսով (առանձնացվող մաս 4) մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Կայան 45-րդ փողոց, 12/3 հողամաս:

5 .Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1704

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԱՅԳԵՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԾԱԾԿԱԳԻՐ՝ 11-009-0063-0001/ 0.3116ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.3116հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-0063-0001/ համապատասխանաբար առանձնացնել 0.27232հա մակերեսով և 0.03928հա մակերեսով անշարժ գույքեր և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.3116հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-0063-0001/ համապատասխանաբար առանձնացված 0.27232հա մակերեսով անշարժ գույքի հասցեն թողնել նույնը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ 34-րդ փողոց, 17 բնակելի տուն:

2. Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.3116հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-0063-0001/ համապատասխանաբար առանձնացված 0.03928հա մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ 35-րդ փողոց, 2/1 հողամաս:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԕՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1705

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԽԱՇԹԱՌԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ 0.14196ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ /ԾԱԾԿԱԳԻՐ 11-035-0035-0004/ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Գագիկ Սուրենի Եղիկյանը ծնված՝ 01.01.1965թ., որ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով (ս/մ [illegible]72,5973) ձեռք է բերել բնակելի տուն՝ իր հողամասով: Ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի քաղվածքի հողամասի օրինական մակերեսը 0.24հա է, սակայն չափագրումից պարզվել է, որ հողամասի /ծածկագիր 11-035-0035-0004/ փաստացի մակերեսը կազմում է 0.14196հա, որի վրա առկա է ընդհանուր 286.03քմ մակերեսով բնակելի տուն և օժանդակ շինություններ: Ուստի դիմել է փաստացի 0.14196հա հողամասի և մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված 286.03քմ մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով /ծածկագիր 11-035-0035-0004/:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0.14196հա մակերեսով հողամասը և ընդհանուր 286.03քմ ներքին մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցված չեն և չեն գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման, ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել քաղաքացի Գագիկ Սուրենի Եղիկյանի սեփականության իրավունքը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.14196հա մակերեսով հողամասի և ընդհանուր 286.03քմ մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ /ծածկագիր 11-035-0035-0004/ և օրենքի ուժով համարել քաղաքացու սեփականությունը:

2. Քաղաքացի Գագիկ Սուրենի Եղիկյանին պատկանող 0.14196հա հողամասով /ծածկագիր 11-035-0035-0004/ բնակելի տանը և օժանդակ շինություններին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Խաշթառակ 11-րդ փողոց, 36 բնակելի տուն:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1706

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ՍԵՎՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.188ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-058-0041-0011 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնքի Սևքար 18-րդ փողոց 1-ին նրբանցք 4 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.188հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-058-0041-0011, վկայական 23072024-11-0053/ առանձնացնել 0.07766հա մակերեսով և 0.11034հա մակերեսով անշարժ գույք և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Սևքար 18-րդ փողոց 1-ին նրբանցք 4 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.188հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-058-0041-0011, վկայական 23072024-11-0053/ համապատասխանաբար առանձնացված 0.11034հա մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, համայնք Իջևան, գյուղ Սևքար 18-րդ փողոց 1-ին նրբանցք 4 կիսակառույց :

2. Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Սևքար 18-րդ փողոց 1-ին նրբանցք 4 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.188հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-058-0041-0011, վկայական 23072024-11-0053/ համապատասխանաբար առանձնացված 0.07766հա մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, համայնք Իջևան, գյուղ Սևքար 18-րդ փողոց 1-ին նրբանցք 4/1 կիսակառույց :

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1707

## 16.12.2025Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 1636 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել համայնքի ղեկավարի 16.12.2025թ. թիվ 1636 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Համայնքի ղեկավարի 16.12.2025թ. թիվ 1636 որոշումը կարդալ.

,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱՅԳԵՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.18731ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել Մարիետա Բուկիան, ծնված՝ 27.06.1960թ., Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասի հիմքերի վերականգնման խնդրանքով: Հողամասի օրինական մակերեսը, ըստ Այգեհովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման քաղվածքի կազմում է 0.15 հա /ծածկագիր 11-009-0073-0027/: Հողամասի չափագրությունից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.18731 հա, ուստի դիմել է օրինական 0.15հա մակերեսով և սահմանազատված, չկառուցապատված 0.03731հա մակերեսով հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով: Հաշվի առնելով, որ նշված հողամասը չի գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման թիվ 22.1 կետի, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1 Վերականգնել քաղաքացի Մարիետա Բուկիայի սեփականության իրավունքը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.18731 հա հողամասի նկատմամբ /ծածկագիր 11-009-0073-0027/ և օրենքի ուժով համարել քաղաքացու սեփականությունը:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման :,,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1708

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ, 0.03084 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնք, Ծաղկավան բնակավայրի վարչական սահմաններում բնակավայրերի բնակելի կառուցապատման նպատակով առանձնացվել է 0.03084 հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության 06.10.2005թ. թի 2125-Ն որոշման, նշված 0.03084 հա մակերեսով հողամասը հանդիսանում է համայնքային սեփականության, բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության հողամաս /ծածկագիր 11-037-0027-0016/: Անհրաժեշտություն է առաջացել փոխել 0.03084 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային Օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով, և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Տավուշի մարզի Իջևան համայնք, Ծաղկավան գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.03084 հա մակերեսով հողամասը /ծածկագիր 11-028-0027-0016/ դասել բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի շարքին:

2.Տավուշի մարզի Իջևան համայնքի Ծաղկավան բնակավայրի վարչական սահմաններում՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասից /ծածկագիր 11-037-0027-0016/, բնակելի կառուցապատման նպատակով առանձնացնել 0.03084 հա հողամաս:

3.Տավուշի մարզի Իջևան համայնքի Ծաղկավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.03084 հա հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ Իջևան համայնք գյուղ Ծաղկավան 7-րդ փողոց, թիվ 14 հողամաս:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1709

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ, 0.06761 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնք, Ծաղկավան բնակավայրի վարչական սահմաններում բնակավայրերի բնակելի կառուցապատման նպատակով առանձնացվել է 0.06761 հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության 08.10.2005թ. թի 2125-Ն որոշման, նշված 0.06761 հա մակերեսով հողամասից 0.02457հա մակերեսով մասը հանդիսանում է համայնքային սեփականության, բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության հողամաս /ծածկագիր 11-037-0014-0001,-0002/: Անհրաժեշտություն է առաջացել փոխել 0.02457 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը և 0.06761հա մակերեսով հողամասին տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային Օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով, և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Տավուշի մարզի Իջևան համայնք, Ծաղկավան գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.02457 հա մակերեսով հողամասը /ծածկագիր 11-028-0014-0002/ դասել բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի շարքին:

2.Տավուշի մարզի Իջևան համայնքի Ծաղկավան բնակավայրի վարչական սահմաններում՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասից /ծածկագիր 11-037-0014-0001,-0002/, բնակելի կառուցապատման նպատակով առանձնացնել 0.06761 հա հողամաս:

3.Տավուշի մարզի Իջևան համայնքի Ծաղկավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.06761 հա հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ Իջևան համայնք գյուղ Ծաղկավան 3-րդ փողոց, թիվ 7/1 հողամաս:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1710

## ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ 480.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Ռոբերտ Ռաֆիկի Գյոզալյանը՝ ծնված 19.10.1973թ., որ 30.12.1994թ. Իջևանի քաղխորհրդի գործկոմի նիստի թիվ 14 արձանագրության հիման վրա, Իջևան քաղաքի վարչական սահմաններում, անհատական բնակարանաշինության նպատակով իրեն հատկացվել է 400,0քմ մակերեսով հողամաս: Չափագրումից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը 480.0քմ է, որը գտնվում է Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում, որը համաձայն Տավուշ-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, Իջևան քաղաքը ներառող գլխավոր հատակագծի բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի մի մաս և հողամասի փաստացի մակերեսը կազմում է 480,0քմ, ուստի դիմել է, որ մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա և փաստացի իր տիրապետման տակ գտնվող օրինական 400,0քմ մակերեսով և սահմանազատված, չկառուցապատված 80.0քմ մակերեսով հողամասի իրավական կարգավիճակի որոշման և հասցեավորում տալու խնդրանքով /ծածկագիր 11-001-0228-0001/:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ սահմանազատված 480,0քմ մակերեսով, չկառուցապատված հողամասը չի գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ և ղեկավարվելով ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Ռոբերտ Ռաֆիկի Գյոզալյանի սեփականության իրավունքը Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում գտնվող օրինական 400,0քմ մակերեսով և սահմանազատված, չկառուցապատված 80.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ /ծածկագիր 11-001-0228-0001/՝ համաձայն ներկայացված հատակագծի:

2.Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում գտնվող՝ Ռոբերտ Ռաֆիկի Գյոզալյանին պատկանող 480,0քմ մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Մետաղագործների փողոց, 5-րդ նրբանցք, թիվ 10/5 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com


## Ո Ր Ո Շ Ու Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1711

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 11-001-0103-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաք Տերյան փողոց 2-րդ նրբանցք 17 հասցեում գտնվող /ծածկագիր 11-001-0103-0006/ 0.06հա մակերեսով հողամասի փաստացի չափագրումից պարզվել է, Տավուշի մարզի Իջևան քաղաքի Տերյան փողոց 2-րդ նրբանցք 17 հասցեում գտնվող հողամասը կադաստրային քարտեզում սխալ է տեղադրված, ուստի անհրաժեշտություն է առաջացել կատարել սահմանների ուղղում:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի, 3-րդ կետի, 29.12.2005թ. և որակավորում ունեցող անձի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հաստատել՝ Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Տերյան փողոց 2-րդ նրբանցք 17 հասցեում գտնվող /ծածկագիր 11-001-0103-0006/ 0.06հա մակերեսով հողամասի սահմանները՝ ըստ ճշտված սահմաններով հատակագծի և կատարել տեղադիրքի ուղղում:

2.Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1712

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱԿՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.09177ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ 11-006-0016-0002 ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԿԻՑ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել Վարուժան Վոլոդյայի Աղասարյանը ծնված՝ 01.01.1978թ., Գրիշա Վոլոդյայի Աղասարյանը ծնված՝ 09.05.1979թ., Արտեմ Վոլոդյայի Աղասարյանը ծնված՝ 01.11.1985թ., Սամվել Վոլոդյայի Աղասարյանը ծնված՝ 03.01.1987թ., Կարինե Վոլոդյայի Աղասարյանը ծնված՝ 28.03.1982թ., որ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Ակնաղբյուր բնակավայրի վարչական սահմաններում /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր թիվ 8171,8171/ ձեռք են բերել բնակելի տուն իր հողամասով և դիմել հիմքերի վերականգնման խնդրանքով: Չափագրությունից պարզվել է, որ հողամասի /ծածկագիր 11-006-0016-0002/ փաստացի մակերեսը կազմում է 0.09177հա, որի վրա առկա է 1990-1999թթ. կառուցված 184.8քմ մակերեսով բնակելի տուն և օժանդակ շինություններ, ուստի դիմել է մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան կառուցման և սպասարկման համար փաստացի 0.09177հա հողամասի և 184.8քմ մակերեսով բնակելի տան քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով: Հաշվի առնելով, որ նշված հողամասն ու շինությունները չեն գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին՚՚ ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների , ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Վարուժան Վոլոդյայի Աղասարյանի, Գրիշա Վոլոդյայի Աղասարյանի, Արտեմ Վոլոդյայի Աղասարյանի, Սամվել Վոլոդյայի Աղասարյանի, Կարինե Վոլոդյայի Աղասարյանի սեփականության իրավունքը՝ Ակնաղբյուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.09177հա մակերեսով հողամասի և ընդհանուր 184.8քմ մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ /ծածկագիր 11-006-0016-0002/ և օրենքի ուժով համարել քաղաքացիների սեփականությունը:

2. Տավուշի մարզի, Իջևան համայնքի Ակնաղբյուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.09177հա հողամասին և 184.8քմ ներքին մակերեսով բնակելի տանը տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ Իջևան, Ակնաղբյուր 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք 1 բնակելի տուն:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1713

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ՍԵՎՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.22601ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-058-0006-0013 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնքի Սևքար 24-րդ փողոց 2 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.22601հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-058-0006-0013, վկայական 24122025-11-0065/ առանձնացնել 0.1596հա մակերեսով և 0.06641հա մակերեսով անշարժ գույք և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Սևքար 24-րդ փողոց 2 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.22601հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-058-0006-0013, վկայական 24122025-11-0065/ համապատասխանաբար առանձնացված 0.1596հա մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, համայնք Իջևան, գյուղ Սևքար 24-րդ փողոց 2 բնակելի տուն :

2. Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Սևքար 24-րդ փողոց 2 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.22601հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-058-0006-0013, վկայական 24122025-11-0065/ համապատասխանաբար առանձնացված 0.06641հա մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, համայնք Իջևան, գյուղ Սևքար 2-րդ փողոց 2/1 հողամաս :

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1714

## ԱՎՏՈՏՆԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ղեկավարին է դիմել Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան համայնքի բնակիչ՝ Տաթևիկ Անդրեյի Գրիգորյանը /դիմում թիվ5141, 23.12.2025թ./, Իջևան համայնք, ք. Իջևան, Աբովյան փողոցի, թիվ26/3 հասցեում գտնվող ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 19.97 քմ մակերեսով հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով՝ կառուցապատման իրավունքով, իրեն հատկացնելու խնդրանքով /վկայական թիվ12122025-11-0029/:

Հաշվի առնելով քաղաքաշինական խորհրդի դրական եզրակացությունը և այն հանգամանքը, որ տարածքը գտնվում է ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված տարածքում և ղեկավարվելով ՀՀ ,, Հողային օրենսգրքի,, թիվ $48^1$ հոդվածի և ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 714-Ն որոշման ,,Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի,, թիվ 44-րդ կետի ժ/ ենթակետի և թիվ 46-րդ կետի բ/ ենթակետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան համայնքի բնակիչ՝ Տաթևիկ Անդրեյի Գրիգորյանին, ավտոտնակ կառուցելու նպատակով, Իջևան համայնք, ք. Իջևան, Աբովյան փողոցի, թիվ26/3 հասցեում, 50 /հիսուն/ տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով, տարեկան 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ իրավունքի վճարի չափով հատկացնել 19.97 քմ մակերեսով հողամաս՝ համաձայն տրվող հատակագծի /ծածկագիր 11-001-0119-0277/:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1715

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՎՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ 11-058-0012-0020 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.2ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել Արայիկ Սերյոժայի Մարդումյանը ծնված՝ 10.10.1964թ., որ Տավուշի մարզի Իջևան համայնքի Սևքար բնակավայրի վարչական սահմաններում, ըստ կտակի ժառանգության վկայագրի (գ/մ 1651) փեռք է բերել 0.2հա հողամաս, որում  առկա է 78.3քմ մակերեսով բնակելի տուն /ծածկագիր 11-058-0012-0020/, որից 63.9քմ մակերես անավարտ շինություն, 14.4քմ մակերես ավարտված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրինական հատկացված 0.02հա մակերեսով հողամասը և 78.3քմ ներքին մակերեսով կիսակառույց բնակելի տունը կառուցված չեն և չեն գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի՚՚60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և ղեկավարվելով, հողային օրենսգրքի թիվ 43 հոդվածի և 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումների պահանջներով, ՀՀ կառավարության 912-Ն  որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ  ԵՄ.

1.Վերականգնել Արայիկ Սերյոժայի Մարդումյանի սեփականության իրավունքը՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Սևքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, 0.02հա մակերեսով  հողամասի և 78.3քմ մակերեսով կիաասակառույց բնակելի տան նկատմամբ /ծածկագիր 11-058-0012-0020/ և օրենքի ուժով համարել քաղաքաց սեփականությունը:

2. Տավուշի մարզի Իջևան համայնքի Սևքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Արայիկ Սերյոժայի Մարդումյանին պատկանող 0.02հա մակերեսով հողամասին և 78.3քմ մակերեսով կիսակառույցին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ Իջևան համայնք գյուղ Սևքար 18-րդ փողոց, 1-ին փակուղի 6 կիսակառույց:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ